

Մատենիչ սիրտը



Exported from Wikisource on 08/24/20

Մատնիչ սիրտը

Էդգար Ալան
Պո

[112] ՄԱՏՆԻՉ ՍԻՐՏԸ

Այո, ես ջղային եմ, շատ ջղային, ահավոր ջղային: Ես հենց սկզբից էլ ջղային էի, բայց ինչու եք ինձ խելագար կոչում: Հիվանդությունը սրել էր, բայց չէ՞ր բթացրել, չէ՞ր վերացրել իմ զգայությունները: Ամենից ավելի լսելությունս էր սրվել՝ չկար մի բան երկնքում կամ երկրում, որը ես չլսեի: Ես նույնիսկ լսում էի շատ բաներ, որոնք կատարվում էին դժոխքում: Էլ ինչո՞ւ պիտի խելագար լինեմ: Դե լսեք և համոզվեք, թե ես որքան հանգիստ ու ողջամտորեն եմ ամեն ինչ պատմելու:

Չեմ կարող ասել, թե այդ գաղափարն առաջին անգամ երբ ծագեց իմ մտքում, բայց ծագելուց հետո ինձ գիշեր-ցերեկ էլ հանգիստ չէր տալիս: Ես ոչ մի հատուկ նպատակ չունեի: Ոչ ոքի չէի ատում: Ես սիրո՞ւմ էի ծերուկին: Նա ինձ երբեք վատություն չէր արել: Երբեք չէր վիրավորել: Նրա ոսկին ինձ պետք չէր: Մեղավորը երևի նրա աչքն էր: Այո՛, այո՛, հենց ա՛չքը, որն ասես թե անգղի բաց երկնագույն, թափանցիկ թաղանթով պատած աչք լիներ: Երբ էլ

որ այդ աշքն ընկներ վրաս, արյունը սառում էր իմ երակներում, և այդպես, աստիճանաբար, ասես ինքն իրեն, ես հաստատ որոշեցի սպանել ծերունուն և ազատվել այդ աշքից:

Բանն էլ հենց այդ է: Դուք ինձ խելագար եք համարում, բայց խելագարն ինքն էլ չգիտի, թե ինչ է անում: Դուք պետք է ի՛նձ տեսած լինեիք: Մի տեսնեիք, թե որքան հմտորեն, ինչպիսի զգուշությամբ ու հեռատեսությամբ և ինչ կեղծավորությամբ էի առաջ տանում իմ գործը: Ես դեռ երբեք այդքան սիրալիր չէի եղել նրա հանդեպ, որքան սպանելուն նախորդող շաբաթվա ընթացքում: Ամեն օր կեսգիշերին ես զգույշ պտտում էի բռնակը և կամաց, շատ կամաց հրում նրա սենյակի դուռը: Երբ արդեն գլխիս չափ ճեղք էր բացվում, ես նախ ներս էի մտցնում խնամքով ծածկված լապտերը, այնպես, որ լույսի ոչ մի շող չերևար, հետո խցկում էի գլուխս: Դուք, երևի չդիմանայիք և փոթկայիք, եթե տեսնեիք, թե որքան խորամանկորեն էի ես այդ բոլորն անում: Ես դանդաղ, շա՛տ դանդաղ էի շարժվում, որպեսզի չարթնացնեմ ծերուկին: Մի ամբողջ ժամ էր տևում, մինչև որ գլուխս լրիվ անցնում էր ճեղքից, և ես կարողանում էի տեսնել անկողնում պառկած ծերուկին: Չե՞ք կարծում արդյոք, որ խելագարն այդքան խոհեմ չէր լինի: Հետո, երբ գլուխս արդեն ներսում էր, ես զգույշ, շա՛տ զգույշ (որովհետև սոնին կարող էր ճռուպ) բացում էի լապտերի փեղկն այնքան, որ լույսի մի բարակ շող ընկներ անգղի աշքին: Եվ այսպես յոթ երկար

գիշեր, միշտ կեսգիշերին. բայց աչքն ամեն անգամ փակ էր լինում: Գործը գլուխ չէր գալիս, քանի որ ինձ ոչ թե ծերուկն էր տանջում, այլ նրա Չար Աչքը: Ամեն առավոտ, երբ լույսը բացվում էր, ես համարձակ մտնում էի նրա սենյակը, աներկյուղ դիմում նրան և հոգատարությամբ հարցնում, թե ինչպես է նա անցկացրել գիշերը: Ինչպես տեսնում եք, նա չափից դուրս խորաթափանց պիտի լիներ, որպեսզի կարծեր, թե ես գիշերներն իրեն այցելում եմ:

Ութերորդ գիշերը ես հատկապես զգույշ էի բացում դուռը: Ժամացույցի մեծ սլաքը երևի ավելի արագ էր շարժվում, քան իմ ձեռքը: Ես դեռ երբեք այդպես չէի *ընթռն/սնել* իմ գործությունն ու մտքի սրությունը, հագիվ էի կարողանում զսպել գնձությունս: Պատկերացնում եք՝ ես կամացուկ բացում եմ նրա դուռը, իսկ նա երագում էլ չի տեսնում կամ զգում իմ թաքուն արարքներն ու մտքերը: Ես նույնիսկ քնծիծաղ տվեցի այդ մտքից, և նա թերևս լսեց ինձ, որովհետև անհանգիստ շուռումուռ եկավ անկողնում: Կարծում եք ես ե՞տ մղվեցի, վախեցա՞, ո՛չ, ա՛յդ էր պակաս: Նրա սենյակում գերեզմանի պես մութ էր (գողերի վախից նա միշտ փակում էր դրսի փեղկերը), և ես, համոզված, որ նա ինձ չի տեսնում, շարունակեցի ներս հրել դուռը:

Ես արդեն ներս էի տարել գլուխս և այն է պատրաստվում էի բացել լապտերի փեղկը, երբ մատս փականի վրայից սայթաքեց, և ծերուկն իսկույն վեր թռավ անկողնում, գոռալով՝ «ո՞վ կա այստեղ»:

Ես անշարժացա ու պապանձվեցի:
Մի ամբողջ ժամ ես քարացած կանգնել
էի, բայց չլսեցի նրա պառկելը: Նա դեռ
նստած էր անկողնում ու լարված լսում
էր, ճիշտ այնպես, ինչպես ե՛ս էլ մեկ-մեկ
գիշերները լսում էի սենյակիս մեռելային
լռությունը:

Հանկարծ մի թույլ հառաչանք լսվեց:
Ես ճանաչեցի այդ ձայնը՝ դա մահացու
սարսափի հառաչանք էր: Ոչ թե ցավի
կամ վշտի, ո՛չ, այլ այն թո՛ւյլ, շնչակտուր
ձայնը, որն արձակում է սարսափախեղդ
արված հոգին: Ես լա՛վ գիտեի այդ
ձայնը: Շատ անգամ, հենց կեսգիշերին,
այդ հառաչանքը պատռել էր իմ
սեփական կուրծքը, իր ահարկու
արձագանքով ավելի սաստկացնելով
մղձավանջներիս սարսափը: Ես ձեզ
ասում եմ, որ լա՛վ գիտեի այդ ձայնը:
Շա՛տ լավ գիտեի, թե ինչ էր զգում
ծերունին և խղճում էի նրան, թեև սիրտս
չարախնդում էր: Ես գիտեի, որ նրա
քունը վաղուց էր փախել, հենց այն թույլ
ձայնից, երբ նա շուռումուռ էր գալիս
անկողնում: Այդ պահից նրա վախը
շարունակ սաստկացել էր: Նա փորձել
էր սրտապնդել իրեն, բայց ապարդյուն:
Նա մտածել էր. «Կա չկա մուկ էր,
պարզապես քամին էր ծխնելույզում
խաղում» և կամ «ծղրիղի ձայն էր, ուրիշ
ոչինչ»: Նա փորձել էր հանգստացնել
իրեն այդ պատրանքներով, բայց ամեն
ինչ իզուր էր, իզուր: Որովհետև դա
մահվան սև ստվերն էր գաղտագողի
մոտեցել ու կառչել իր գոհից: Այդ մռայլ
ստվերի ազդեցության տակ նա թեև չէր
տեսնում, բայց զգում էր իմ գլխի
ներկայությունը սենյակում:

Երկար, շատ երկար ես համբերությամբ սպասում էի, որ նա պառկեր, և վերջապես որոշեցի փոքրիկ, մագաշափ մի ճեղք բանալ լապտերում: Անհավատալիորեն դանդաղ և զգույշ ես բացեցի դռնակը, մինչև որ լույսի սարդոստայնի պես բարակ մի ճառագայթ ընկավ անգղի աչքին:

Աչքը բաց էր, լայն չռված, և նրա տեսքն ինձ կատաղեցրեց: Ամբողջ մարմինս փշաքաղվում էր, երբ նայում էի այդ երկնագույն, քստմնելի թաղանթին: Ծերուկի դեմքն ու մարմինը չէին երևում, քանի որ ես, ասես բնագդաբար, ճառագայթն ուղղել էի ճիշտ այդ անիծյալ կետին:

Ասում էի չէ՞, որ դուք խելագարության տեղ եք դրել զգայություններիս արտակարգ սրությունը: Նույն այդ պահին ես լսեցի ցա՛ծր, խուլ և ընդհատվող մի ձայն, որը նման էր բամբակի մեջ փաթաթած ժամացույցի ձայնին: Ով-ով, իսկ ես ճանաչում էի այդ ձայնը: Դա ծերունու սրտի տրոփն էր, որը բորբոքեց իմ կատաղությունը, ինչպես թմբուկի ձայնն է խթանում գինվորի խիզախությունը:

Նույնիսկ այդ պահին ես ինձ գսպեցի և չշարժվեցի իմ տեղից: Ես շունչս պահած ձեռքիս մեջ ամուր սեղմեցի լապտերը, աշխատելով ինչքան կարելի է անշարժ պահել նրա լույսն անգղի աչքին: Մինչ այդ սրտի դժոխային զարկերը քանի գնում այնքան ուժեղանում էին և ավելի ու ավելի հաճախակի դառնում: Ծերունու սարսափը պետք է որ ամեն սահման անցած լիներ: Բաբախոցն ուժեղանում

Էր, դուք հասկանո՞ւմ եք, գնալով ավելի
 Էր ուժեղանում: Ես ձեզ արդեն ասել եմ,
 ուրեմն, որ ջղային եմ: Եվ ահա ուշ
 գիշերով հին տան չարագուշակ լռության
 մեջ լսվող զարհուրելի ձայնն ինձ գրեթե
 խելագարության դուռը հասցրեց:
 Չնայած դրան, ես կարողացա մի քանի
 վայրկյան ևս զսպել ինձ: Բայց սրտի
 բաբախոցն ավելի ու ավելի Էր
 սաստկանում, և ինձ թվաց, թե նա ուր որ
 Է^[116] զայրո՞ւ: Այդ պահին իմ մտքում մի նոր
 տազնապ ծնվեց՝ հարևանները կարող
 Էին լսել բաբախոցը: Ծերունու օրհասը
 եկավ: Վայրենի ճիչով ես բացեցի
 լապտերի փեղկն ու ներս ցատկեցի:
 Ծերունին հագիվ հասցրեց մեկ անգամ
 ճշալ: Մի ակնթարթում ես նրան
 անկողնուց ցած գցեցի և, ծանր
 ներքնակի տակ ճգմելով,
 գոհունակությամբ ժպտացի՝ գործի կեսն
 արված Էր: Ծերուկի սիրտը դեռ խուլ
 զարկում Էր, բայց դա ինձ այլևս չԷր
 անհանգստացնում, ձայնն անշափ թույլ
 Էր պատից անցնելու համար:
 Վերջապես ամեն ինչ լռեց՝ ծերուկն
 արդեն մեռած Էր: Ես ձեռքս դրի նրա
 կրծքին և մի քանի րոպե պահեցի,
 սիրտը չԷր բաբախում: Այո, նա մեռած
 Էր, լեշի պես սատկած: Նրա աչքն ինձ
 այլևս չԷր խանգարելու:

Եթե դուք ինձ դեռ խելագար եք
 համարում, ապա ստիպված կլինեք
 փոխել ձեր կարծիքը, երբ ես պատմեմ,
 թե ինչպիսի խելացի
 կանխագգուշություններով թաքցրի
 դիակը: Գիշերն արդեն անցնում Էր,
 ուստի ես գործում Էի արագ, բայց
 անձայն: Նախ և առաջ

անդամահատեցի դիակը, կտրելով նրա գլուխը, ձեռքերն ու ոտքերը:

Հետո երեք տախտակ հանեցի հատակից և կտորտանքը խցկեցի գերանների արանքը: Այնուհետև այնքան խնամքով, խորամանկ և հմուտ տեղադրեցի տախտակները, որ ոչ մի աչք, նույնիսկ նրանք, ոչ մի կասկածելի բան չէր նկատի: Լվանալու բան չկար՝ ոչ մի բիծ, արյան ոչ մի կաթիլ: Ես այդքան հիմար չեմ, որ հետքեր թողնեի՝ ամեն ինչ ուղիղ լցվել էր տաշտակի մեջ, հա՛, հա՛, հա՛:

Երբ ես գործերս վերջացրի՝ արդեն ժամը չորսն էր, բայց դրսում դեռ մութ էր: Նոր էր ժամացույցը զարկել, երբ ինչ-որ մեկը դրսի դուռը թակեց: Ես հանգիստ սրտով իջա դուռը բացելու, ինչի՞ց պիտի վախենայի: Երեք հոգի ներս մտան և ամենայն քաղաքավարությամբ հայտնեցին, թե ոստիկանությունից են եկել: Հարևանս գիշերը ինչ-որ ճիշ էր լսել, ոճիր էր կասկածել և իմաց էր տվել ոստիկանատուն: Նրանք (սպաները) հրաման էին ստացել տունը խուզարկելու: Ես ժպտացի, իսկապես, վախենալու ի՞նչ ունեի, և նրանց սիրալիր ներս հրավիրեցի: Բացատրեցի, որ ինքս էի քնի մեջ ճչացել: Ի միջի այլոց նշեցի, որ ծերունին գյուղ է մեկնել: Խրախուսեցի նրանց, որ լավ փնտրեն: Ես նրանց ցույց տվի ¹¹⁷անբողջ տունը և վերջապես բերի նրա սենյակը: Ես ցույց տվի նրա գանձերը, ապահով ու անձեռնմխելի: Ես այնքան ինքնավստահ էի, որ աթոռներ բերի և նրանց առաջարկեցի հանգստանալ հենց այնտեղ, նրա՛ սենյակում, իսկ ինքս

կատարյալ ցնծությանը աթոռս դրի հենց այն տախտակների վրա, որոնց տակ իմ գոհի դիակն էր:

Սպաները բավարարված էին: Իմ անբռնագրոսիկ վարքը համոզել էր նրանց: Նրանք նստեցին ու սկսեցին դեսից-դենից դատարկաբանել, և ես աշխուժորեն միացա նրանց գրույցին: Բայց քիչ հետո զգացի, որ գույնս զցել եմ և արդեն ուզում էի ինչքան կարելի է շուտ ազատվել նրանցից: Գլուխս ցավում էր, ականջներս կարծես զնգում էին, իսկ նրանք դեռ նստած շատախոսում էին: Ականջներիս զնգոցն ուժեղանում և ավելի հստակ էր դառնում, ես ավելի ու ավելի անկաշկանդ էի խոսում, որպեսզի խլացնեմ այն, բայց շուտով համոզվեցի, որ այդ ձայնը ականջներիս մեջ չէր:

Կասկած չկար, որ ես արդեն սփրթնել էի, չնայած լեզուս ջուր էր կտրել: Իսկ այդ ձայնը քանի զնում ուժեղանում էր, և ես ոչինչ չէի կարող անել: Դա ցա՛ծր, խուլ և ընդհատվող մի ձայն էր, նման բամբակի մեջ փաթաթած ժամացույցի ձայնին: Ես շնչակտուր էի լինում, բայց սպաները ոչինչ չէին լսում: Սկսեցի խոսել ավելի արագ, ավելի մոլեգին— ձայնը զնալով ուժեղանում էր: Ես ոտքի կանգնեցի և ինչ-որ անիմաստ վեճ բացեցի, ձայնս բարձրացնելով ու ձեռքերս թափ տալով, բայց ապարդյուն: Ես չէի հասկանում, թե նրանք ինչու չեն հեռանում: Ես մոլեգնած քայլում էի սենյակով մեկ, ձևացնելով, թե վեճից բորբոքվել եմ— ձայնն անշեղորեն ուժեղանում էր: Աստված իմ, ես ի՞նչ կարող էի անել... Բերանս փրփրել էր, ես կոպտում էի,

հայիոյում, ճոճում էի աթոռն ու
հատակին խփում, բայց ձայնը ավելի,
ավելի ու ավելի էր սաստկանում: Իսկ
այդ մարդիկ անհոգ ժպտում էին ու
գրուցում: Հնարավոր էր արդյոք, որ
նրանք չլսեին:

Ամենագո՛ր տեր, ո՛չ, նրանք,
անկասկած, լսում էին, կասկածո՛ւմ,
նրանք ամեն ինչ գիտե՛ին... Նրանք
պարզապես ծաղրո՛ւմ էին իմ
սարսափը, ես այդպես էի կարծում և
այժմ էլ մնում եմ նույն համոզմունքին:
Ի՛նչ ուզում է լիներ, բայց ոչ այդ
սոսկալի հոգեվարքը: Ես այլևս չէի
դիմնում այդ ծաղրութանակին, այդ
կեղծավոր ժպիտներին: Ես գգում էի, որ
պիտի գոռամ, այլապես կմեռնեմ...
Ահա... նորի՛ց այդ ձայնը... ավելի
բա՛րձր, ավելի ուժգի՛ն...

— Ճիվաղներ,— ճշացի ես,— հերի՛ք
է կեղծավորություն անեք...
Խոստովանում եմ, պոկե՛ք
տախտակները... Այստե՛ղ, այստե՛ղ է
տրոփում նրա գարշելի սի՛րտը:

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- GeoO

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)